ՀԱՅՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԸ



Աշխարհաժողովային կառավարում, Հիմնադրամային տնտեսվարում, Արարատյան Մարդու (Հոգևոր Էակի) մշակութայնացման հայեցակարգեր

ՀԱՅՔ ազգային պետությունն իր մեջ խտացնելու և միաժամանակ արտահայտելու է Ապագա Հասարակարգի ողջ էությունն ու բնույթը: Հետևաբար, Ապագա Հասարակարգի կայացման համար առաջարկվում է.

Մշակութայնացման ոլորտում՝ Հոգևոր Էակի կայացման կենսահայեցակարգը, քաղաքական ոլորտում՝ Աշխարհաժողովային կառավարաման կենսահայեցակարգը, տնտեսական ոլորտում՝ Հիմնադրամային տնտեսվարման կենսահայեցակարգը: Վերջիններս իրենց մեջ կրում են ապագային միտված հասարակարգային փոփոխությունների հնարավոր կոդերը և որպես ամբողջագիտական կենսահայեցակարգեր՝ արմատապես տարբերվում են ժամանակակից աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական և աշխահամշակութային կոնցեպցիաներից:

Ա/ Մշակութայնացման ոլորտ: Հոգևոր էակի կայացում: Մարդու և հասարակության վերաճային փուլերը

Մշակութայնացումը հանդիսանում է հասարակական կյանքի կազմակերպման հիմնարար դրսևորումը: Նրա միջոցով է սահմանվում տվյալ համակեցական մակարդակում մարդու և նրա համակեցական վիճակների ձևավորման ուղղորդիչները (վեկտորները): Ավելացնենք նաև, որ մեր կողմից մշակութայնացումը դիտարկվում է՝ որպես ցանկացած հասարակական համակարգի կայացման համար անհրաժեշտ տեղեկատվություն, այսինքն՝ այն հիմքը, որով կանխորոշվում են համակարգի մյուս սուբստանտների բնույթը:

Վերոնշյալով փաստվում է մշակութայնացման բացառիկ դերը ցանկացած հասարակարգի կայացման ընթացքում: Հետևաբար, անհրաժեշտություն ենք տեսնում, առավել մանրամասն անդրադառնալ այս հասկացությանը:

Մշակութայնացումը մարդկանց համակեցական ձևերում (ընտանիքից մինչև լոկալ և համամարդկային քաղաքակրթություն) արտահայտում է տիրապետող աշխարհայացքը (հասունության աստիճանը), այսինքն՝ Աշխարհի պատկերի կոնկրետ տիպը: Նրա միջոցով է ձևակերպվում մարդկանց բնազդային, գիտակցական ու հոգևոր պահանջմունքները և դրանց բավարարման անհրաժեշտ մակարդակը: Այն ներառում է ժամանակին համապատասխան ողջ արժեհամակարգը: Հասարակության մշակութայնացումն իրականացվում է կրթության, դաստիարակության, գիտության, տիրապետող գաղափարախոսության և տվյալ պահին հասանելի սոցիալական տեղեկտավության փոխանակման այլ միջոցներով:

«Մշակութայնացում» հասկացության նման տարողունակ բովանդակությունը կարելի է սահմանել հետևյալ ձևակերպմամբ.

Այն ամբողջացնում է հասարակության (ողջ մարդկության) էութենական խտացման երևութական դրսևորումը և կոնկրետ ժամանակի ու տարածության մեջ սահմանում է բուն մարդու լինելության կենսիմաստն ու դրան համապատասխան կենսաձևի թույլատրելի նորմերը:

Այսպիսով, Ապագա Հասարակարգի բնույթն ամբողջությամբ կախված է նրա մշակութայնացման ձևից։

Այս ամենից ակնհայտ է դառնում, որ ժամանակակից ճգնաժամի հաղթահարումը պարտադրում է Ապագա Հասարակարգի կայացման համար մշակութայնացման Նոր մակարդակ։

Հակահամակարգի կողմից ապագայի մշակութայնացման մոդելները հավաքված են «Տրանսհումանիզմ» հայեցակարգի հովանու տակ։ Այն ենթադրում է մարդու իրավունքների գերպարզեցման ու գռեհիկացման միջոցով ապամոնտաժել մարդկային պատասխանատվության ցանկացած դրսևորում, որի միջոցով էլ մոտ ապագայում հնարավոր է կայացնել մարդկային նոր տիպը՝ «հետմարդը»։

Մենք Ապագա Հասարակարգի մշակութայնացման հիմքը սահմանում ենք «Հոգևոր Էակի» կայացման կենսահայեցակարգը։

Ապագայում վերջինիցս է ածանցվելու մարդկային հարաբերությունների դրսևորման ողջ բնույթը։

Ապագա Հասարակարգը կենսագործելու է Հոգևոր Էակի կայացման տրամաբանությամբ, քանի որ մարդը կենդանի և գիտակցական էակ լինելուց բացի նաև՝ **Հոգևոր-ոգեղեն էակ է։** Մարդկային էության վերաճն ապահովելու է նրա ինքնութենական ամբողջականությունը, որի շնորհիվ կվերարժևորվեն մարդու և նրա համակեցական վիճակների կենսագործունեության գրեթե բոլոր բնագավառները։ Մարդկային էությանը համապատասխան այդ վերաճը ընդհանրական ձևով ներկայացված է աղյուսակ 1-ում։ Ըստ այդմ, պարզ է դառնում, որ Հոգևոր էակի պարագայում բոլորովին նոր որակի են բարձրանում մարդու իմացական գործունեությունը, նրա ճանաչողության մակարդակն ու նպատակադրումը, ըստ այդմ նաև՝ մտածողության ձևերն ու պահանջմունքների բնույթը։

Ապագայում այսպիսի անձ-անհատականության և նման անհատականություններով ձևավորված համայնքի, ազգի, պետության և մարդկության գոյաբանական իմաստները փոփոխվում են, իսկ այդ նոր

կենսիմաստների հիմքի վրա փոփոխվում են նաև նրանց պահանջմունքները և դրանց բավարարելուն ուղղված անհատական և հավաքական կենսագործունեությունը, ազգային համակեցական կյանքը, պետականակարգությունը և ողջ Աշխարհակարգի բնույթը։

Միայն նման գիտակցմամբ ու տրամաբանությամբ է հնարավոր հաղթահարել առկա ճգնաժամը և կայացնել Նոր, Արդար Հասարակարգը։

Հետևաբար, ապագա հասարակարգում մշակութայնացմամբ կարգավորվող կյանքի բոլոր ոլորտները՝ կրթություն, դաստիարակություն, առողջապահություն, կառավարում, տնտեսվարում, տեղեկատվություն ու իրազեկում, իրավունք ու արդարադատություն, պարտականություններ և պատասխանատվություններ, արվեստ, գիտություն ու հավատամքներ և այլն, պետք է ծառայեն Հոգևոր Էակի կայացմանն ու էացմանը։ Իսկ Հոգևոր Էակի կայացումը, առկա ճգնաժամի հաղթահարման միակ ուղին է, որովհետև նրա կենսիմաստը բխում է Արարչական Կամքի ճանաչողությունից, դրան հավատարիմ լինելու և, ըստ այդմ, սեփական կյանքը կայացնելու ինքնանվիրումից, ինչպես նաև, նման հոգևոր էակներով ձևավորվող ազգի, հասարակության ու պետության կենսազարգացման ու կատարելագործման առաքելությունից։

Ամփոփման համար հավելենք, որ ինչպես կենդանական ու բանական էակները, այնպես էլ Հոգևոր էակը նույնպես ունենալու է իր ներքին հասունացման վերաճային հանգրվանները։ Դրանք համապատասխանելու են մարդկության կյանքի ցիկլի տրամաբանությանը։ Այսինքն՝ Համամարդկային քաղաքակրթության կյանքի Արարչակրթական փուլի ամբողջացումը պարտադրում է Համաշխարհային քաղաքակրթության կյանքի ամբողջական ցիկլի իրացում, որի յուրաքանչյուր փուլ կայանալու է Հոգևոր Էակի ներքին հասունացման միջոցով։

Արարչական Կենսականոնագրում հստակ սահմանված և բնութագրված են Հոգևոր Էակի ներքին հասունացման մակարդակները, որի համաձայն առանձնացվում են այդ էության՝

«Արդարական», «Ազնվական», «Նվիրական», «Շնորհական», «Արարչական» դրսևորումները և որոնց առավելագույն **«Էական»** մակարդակը՝ արդեն **«Էացումն է»**:

Հենց այս հիմքով է, որ մեր կողմից Արարչակարթական կենսընթացի արդյունքը համարում ենք **«Պատմության Ավարտ»**՝ մարդկության որոնողական ճանապարհի ավարտ:

Ակնհայտ է, որ Հոգևոր Էակի հասունացման յուրաքանչյուր մակարդակում վերաճ է ապրելու նաև հասարակությունների մշակութայնացման ձևը, որին համապատասխան էլ կերպափոխվելու են պետականակարգության ձևերը:

Այս ամենը պրոյեկտելով Հայկական քաղաքակրթության Նոր կենսընթացի մեկնակետ համարվող Ազգային պետության վրա, կստանանք այդ պետության մշակութայնացման ամբողջական բանաձևը: Այն է.

Հայոց Ազգային Պետությամբ արարելու հնարավորություն է ստանալու Ապագայի մարդը՝ Հոգևոր Էակը՝ Արարատյան Մարդը: Այսինքն՝ հստակ է դառնում մեր Բարձր նպատակի կայացման ուղղորդիչը (վեկտորը)[1], որի տարածաժամանակային զարգացման անընդհատականության շնորհիվ կյանքի կկոչվեն մեր մյուս նպատակների կայացումները:

Ամփոփումը ներկայացնեք հետևյալ բանաձևով.

Ապագա Արդար Հասարակարգի բնույթը կարող է և պետք է ձևակերպվի հայկականության շնորհիվ՝ Հայկական Ազգային պետության մշակութայնացման մատրիցայով: Այն ապահովելու է «Նոր Համակարգի» ձևավորման ինֆորմացիոն սուբստանտի հիմքը:

[1] Հայկական քաղաքակրթական ապագա կենսընթացի նպատակադրումները համակարգված ձևով ներկայացված են ՀԱՅՔ շարժման գաղափարական փաթեթի 6-րդ փաստաթղթում:

ԱՂՅՈՒՍԱԿ 1

ՄԱՐԴԿԱՅԻՆ ԷՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՃԸ

	ՄԱՐԴԿԱՅԻՆ ԷՈՒԹՅԱՆ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐ	ԲՆԱԿԱՆ ՄԱՐԴ	ԲԱՆԱԿԱՆ ՄԱՐԴ	ՀՈԳԵՎՈՐ ԷԱԿ
1	ՄԱՐԴԿԱՅԻՆ ԷՈՒԹՅՈՒՆ	ԲՆԱԶԴԱՅԻՆ	ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ	ՀՈԳԵՎՈՐ
2	ԻՄԱՑԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ	ԶԳԱՅԱԿԱՆ	ԳԻՏԱԿՑԱԿԱՆ	ՈԳԵՂԵՆ
3	ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿ	ԷՄՊԻՐԻԿ	ՏԵՍԱԿԱՆ	ՀՈԳԵՎՈՐ
4	ՃԱՆԱՉՈՂՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԱԴՐՈՒՄ	ԱՆՁԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ	ԱՇԽԱՐՀԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ	ԱՄՏՎԱԾԱՃԱՆԱՉՈՒԹՅՈՒՆ
5	ՄՏԱԾՈՂՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐ	ԶԳԱՅԱԿԱՆ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՐԶ ԴԱՏՈՂՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ	ԳԻՏԱԿՑԱԿԱՆ ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆ՝ ՊԱՐԶ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՔՈՎ	ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
6	ՊԱՀԱՆՋՄՈՒՆՔՆԵՐԻ ԲՆՈՒՅԹ	ԱՆՁՆԱԿԱՆ/ ՆՅՈՒԹԱԿԱՆ	ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՆՅՈՒԹԱԿԱՆ/ՀՈԳԵՎՈՐ	ՈԳԵՂԵՆ/ ՀՈԳԵՎՈՐ
7	ԿԵՆՍԸՆԹԱՑ	ՆԽԱՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ	ՔԱՂԱՔԱԿՐԹԱԿԱՆ	ԱՐԱՐՉԱԿՐԹԱԿԱՆ

Բ/ Քաղաքական ոլորտ: Աշխարհաժողով: Քաղաքական արդիականացման վերաճային փուլերը

Ապագա Հասարակարգի դրսևորման ամբողջական խճանկարում հաջորդ հատվածը վերաբերում է քաղաքական ոլորտին: Շեշտենք, որ այն մեր կողմից դիտարկվում է որպես «Նոր Համակարգի» կայացման համար անհրաժեշտ էներգիա, որը մշակութայնացման տեղեկատվությունը ցանկալի մատերիայի է վերածելու: Ըստ այդմ, քաղաքական ոլորտում տիրապետող հայեցակարգի, սկզբունքների և մեթոդների միջոցով սահմանվում է հասարակական կյանքի կառավարման ողջ բնույթը: Այսինքն՝ այն վերաբերելի է ոչ միայն քաղաքական ոլորտին, այլև հասարակական հարաբերությունների կարգավորման ու կառավարման ողջ սպեկտրին:

Խնդրի ամբողջական բացահայտման համար նշենք, որ Ապագա Հասարակարգում նոր հայեցակարգը լրիվությամբ փոխարինելու է ներկա արևմտյան ժողովրդավարությանը, որը պատկերավոր ձևակերպմամբ (բազմիցս հիմնավորել ենք) այսօր արդեն արձանագրել է սեփական «վախճանը»: Այս համատեքստում նորից փաստարկենք, որ ներկայիս ժողովրդավարությունը ոչ միայն իրեն սպառել է և դարձել առկա ճգնաժամի դրսևորման հիմնական ձևերից մեկը, այլև խորքի մեջ, հենց ինքն է հանդիսանում ճգնաժամի քաոսային դրսևորման պատճառներից մեկը:

Այս ամենն ուղղակի պարտադրում է կառավարման նոր որակի գոյություն, որը ոչ միայն ունակ կլինի հաղթահարել առկա ճգնաժամը, այլև իր բովանդակությամբ ու ձևով կհամապատասխանի ապագային: Այսինքն՝ կապահովի Ապագա Հասարակարգի կառավարման ողջ էներգիան՝ մշակութայնացման սկզբունքների և տեղեկատվության համապատասխան:

Նման տրամաբանության հենքով մենք առաջարկում ենք **«Աշխարհաժողով» կառավարման կենսահայեցակարգը**:

Ի տարբերություն այսօր գոյություն ունեցող այն առաջարկների, որոնք խնդրի լուծումը տեսնում են արևմտյան ժողովրդավարության համատեքստում՝ հասարակությունների քաղաքական բնականոն արդիականացման միջոցով, մեր կողմից «Աշխարհաժողով» կառավարման կենսահայեցակարգի առաջադրումը ենթադրում է ներկա կառավարման համակարգի ամբողջական, արմատական փոփոխություն։ Մեր խորին համոզմամբ, առկա ճգնաժամի հաղթահարումը հնարավոր չէ բնականոն արդիականացման ճանապարհով, այստեղ պետք է հեղափոխական մոտեցում, որը ենթադրում է ամբողջական հիմքի փոփոխություն։ Ավելին, կառավարման համակարգի արմատական փոփոխությունը թելադրված է նաև Ապագայի՝ Նորի կայացման պարտադրանքով, քանի որ այն իր բովանդակությամբ ապահովելու է Ապագա Հասարակարգի էութենական հիմքերի դրսևորումն ու կառավարումը։

Մեր համոզմամբ ու հիմնավորմամբ դա **«Աշխարհաժողով» կառավարման կենսահայեցակարգն է**։ Այն որպես հայոց ազգի քաղաքակրթական արժեհամակարգային հիմքի վրա ազգային ինքնակառավարման սոցիալ-բնական և կենսասոցիալական համակարգ, միաժամանակ ապահովում է անցյալի, ներկայի ու ապագայի օրգանական կապը, քանի որ անցյալի փորձն արդիականացնելով ներկայում, կերտում է հենց այդ ներկան և նրանում էլ՝ ապագան։ Այսինքն՝ Աշխարհաժողով հայեցակարգը հանդես է գալիս որպես **ապագայի կերտում ներկայում՝ անցյալի պատմական ժառանգականությամբ ու դրա քաղաքակրթական արդիականացմամբ։**

Հատուկ շեշտենք, որ աշխարհաժողովային կառավարումը՝ որպես պատմական գործիք, ոչ թե ենթադրում է վերադարձ անցյալ, այլ՝ անցյալի, ներկայի ու ապագայի օրգանական կապի միջոցով՝ **Վերադարձ Ապագա։**

Ըստ այդմ, առկա ճգնաժամի հաղթահարման համար մենք հենման կետ ենք ընտրում պատմականորեն փորձված ու ստուգված կառավարման համակարգը, որը քաղաքակրթական արդիականացման արդյունքնում պետք է լիարժեք և անկաշկանդ

զարգացման հիմք հանդիսանա։ Ժամանակին համակարգային ճգնաժամի հաղթահարման համար մարդկությունն ընտրեց Հին հունական կառավարման համակարգը՝ դեմոկրատիան։ Հիմա՝ ներկա ճգնաժամի հաղթահարման համար, համամարդկային քաղաքակրթությունը կարող է և պետք է օգտվի հայկական քաղաքակրթական ժառանգությունից ու արժեհամակարգից։

Աշխարհաժողովային մոդելը մանրամասնորեն ճարտարապետված է **Աշխարհաժողովի մանիֆեստում։**[2] Դրա համաձայն, Աշխարհաժողովի բովանդակությունն ամբողջանում է իրար հետ փոխպայմանավորված երկու հարթությամբ.

1. **Որակական՝ ըստ նշանակության,**
2. **Քանակական՝ ըստ մասշտաբայնության։**

Աշխարհաժողովի որակական նշանակությունն իր հերթին արտահայտվում է քաղաքական, տնտեսական, սոցիալական, քաղաքակրթական և հոգևոր դրսևորումներով, որոնց միջոցով ամբողջանում է հասարակական կյանքի ողջ կառավարումը։

Ըստ մասշտաբայնության, այն բաժանվում է երեք մակարդակի՝ նվազագույն, միջին և առավելագույն (լոկալ, տարածաշրջանային և գլոբալ)։

Որակական նշանակության վերը նշած ցանկացած դրսևորում կենսագործելի է մասշտաբայնության երեք մակարդակներում, այսինքն՝ կիրառելի է թե՛ լոկալ, թե՛ ռեգիոնալ, և թե՛ գլոբալ չափումներում։

Ըստ այդմ, բացառիկ համակարգվածությամբ առաջարկվում է ալգորիթմ, մատրիցա, մոդել ու գործընթաց, որը կոնկրետ հայկականության պարագայում կայանալու է երեք մակարդակներում՝

[2] Արդեն հրապարակված կա «Աշխարհաժողովի մանիֆեստը», որն իր մեջ ամփոփում է Ազգային պետության աշխարհաժողովային կառավարման դրույթները, սկզբունքները և գործարկման ձևերը։ Մանրամասն տե՛ս, Մակարյան Է., Աշխարհաժողովի մանիֆեստ։ Հայք Ազգային պետության աշխարհաժողովային կառավարման մանիֆեստը., հեղ. հրատ., Գյումրի, 2022.- 56 էջ

- **ներազգային ու ներպետական մակարդակ** (որպես Հայոց Ազգային Պետության կառավարման նոր համակարգ և ժամանակակից ճգնաժամը հաղթահարելու, գրեթե այլընտրանք չունեցող գործիք),
- **համազգային ու համահայկական մակարդակ** (որպես ազգակեցական ու ազգապետական կառավարման համակարգ),
- **համամոլորակային ու համաքաղաքակրթական մակարդակ** (որպես քաղաքակրթական մեծ հարթակում առկա ճգնաժամը հաղթահարելու և համամարդկային ու մոլորակային կյանքը վերաիմաստավորելու հայկական քաղաքակրթական բանաձև ու հայտ)։

Աշխարհաժողովը՝ որպես Նորի կայացման ու կառավարման համակարգ, իր հերթին կոնկրետ դրսևորում պետք է ունենա ոչ միայն քաղաքական ոլորտում, այլ հասարակական կյանքի կազմակերպման հիմնային մյուս ոլորտներում։ Դրան համապատասխան, կարելի է սահմանել Աշխարհաժողովի կենսագործուն համակարգերը՝ իրենց բանաձևերով։ Դրանք են.

- **Հոգևոր-արժեքային ոլորտում Աշխարհաժողովի կենսագործունեության համակարգ –**

Աշխարհաժողովն ապահովելու է «երջանկություն – կատարելիություն – անմահություն» անխախտ շղթայի հիմքով Հոգևոր Էակի կայացումը, Աստվածաստեղծ՝ արարող մարդու գոյության իմաստավորման շարունակականության ապահովումը։

- **Քաղաքական ոլորտում Աշխարհաժողովի կենսագործունեության համակարգ -**

«Պարտականություն – վաստակ – իրավունք-պատասխանատվություն» անխախտ շղթայի հիմքով մարդկային համակեցությունների կառավարման Նոր, Արդար մոդելի ապահովումը։

- **Սոցիալ-տնտեսական ոլորտում Աշխարհաժողովի կենսագործունեության համակարգ –**

«Մասերը լիարժեք և կենսունակ են Ամբողջի կենսագոյությամբ, իսկ Ամբողջը կենսագործուն է Մասերի լիարժեքությամբ ու ամբողջականացմամբ» բանաձևի անխախտ հիմքով մարդկային տնտեսվարության նոր, առավել Արդար մոդելի ապահովումը։

Աշխարհաժողովային կառավարման նոր համակարգի փիլիսոփայությունը կառուցվում է ընտրելու և իշխանություն շնորհելու երկու փոխլրացնող շերտերի վրա՝ տարածքային և ոլորտային-մասնագիտական։ Սակայն ի տարբերություն ժամանակակից դեմոկրատիայի, այն բացառապես հիմնված է պարտականություն – վաստակ – իրավունք-պատասխանատվություն անխախտ շղթայի վրա, որն ամբողջանում է որպես ընդհանուրի նկատմամբ մասնավորի, ամբողջի նկատմամբ մասի ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ պարտականության գիտակցմամբ ու իրացմամբ, դրանով վաստակի ձեռքբերմամբ, արդյունքում իրավունքի արժեշնորհությամբ, որն էլ ամփոփվում է այս ամենի հանդեպ պատասխանատվության դրսևորմամբ։

Առաջարկվող մոդելում տարածքային կառավարման համար ընտրելու իրավունք ոչ թե յուրաքանչյուրն է ստանալու, այլ՝ ընտանիքները։ Հանրային առաջնային օղակը՝ ընտանիքն է այն առանցքային մատրիցան, ուր անհատը դրսևորվում է որպես իրապես ազատ անձ՝ իր սկզբնական հանրային պարտականությունների խոր գիտակցմամբ ու դերակատարմամբ։ Հետադարձ պատասխանատվության և հաշվետվության այս վարքագծային մոդելն ապահովում է անհատի հետագա սոցիալացումը առանց լուրջ խնդիրների։

Հետևաբար, ընտանիքը պետք լինի ընտրության առաջնային սուբյեկտը և ոչ թե հանրային կապերից ու պատասխանատվություններից զերծ և սեփական որոշումների/քայլերի համար որևէ պարտականություն ու պատասխանատվություն չկրող անհատը, որն այսօր օգտվում է սոսկ ապրիորի ու անվերապահ իրեն ընձեռված անպատասխանատու իրավունքից և ընտրության ազատությունից։

Ընտանիքը պետք է ընտրի իր ներկայացուցչին և լիազորի նրան մասնակցելու ինչպես տեղական, այնպես համապետական/համընդհանուր ընտրություններին և

հանրաքվեներին՝ «մեկ ընտանիք, մեկ ձայն» սկզբունքով։ Այս սկզբունքը կարևոր է նրանով, որ եթե ընտանիքը չի կարողանում անգամ իր ներսում ընտրել իր ներկայացուցչին, ով հանդես կգա այդ ընտանիքի անունից ու կներկայացնի այն, ապա ինչպես կարելի է նման անհամաձայնության մեջ գտնվող մարդկանց վստահել ավելի մեծ՝ համայնքային կամ համապետական ընտրություն ու հանրաքվե։ Այսինքն՝ առաջնային պարտականություն-վաստակ-իրավունք-պատասխանա-տվություն սկզբունքը պետք է գործի հենց այս առաջնային օղակում։ Իսկ եթե տվյալ ընտանիքը չի վաստակել այդ իրավունքը, այսինքն՝ իր մեջ չի կարողանում ընտրություն կատարել, կնշանակի նա պետք է զրկվի ավելի մեծ ընտրական իրավունքից օգտվելուց։

Ընտրությունները պետք է անցկացվեն միմիայն բաց քվեարկությամբ, ինչը թույլ կտա, որ ընտանեկան մանդատ ստացած ընտրողն ունենա բարձր պատասխանատվություն իր որոշումների համար ոչ միայն իր ընտանքի, այլև սեփական համայնքի մյուս անդամների նկատմամբ։

Որոշումների կայացման այս տարբերակը ոչ միայն լիովին կապահովի թափանցիկությունը, այլև սեփական որոշումների համար հանրային պատասխանատվությունից խուսափելու, թաքնվելու արմատացած արատը կբացառվի։

Ոլորտային խորհուրդների և Աշխարհաժողովի Ոլորտային պալատի պատգամավորների ընտրությունը կիրականացնեն այն քաղաքացիները, ովքեր անդամակցում են ոլորտային ասոցիացիաներին և ճանաչված են սեփական մասնագիտական համայնքում որպես անհրաժեշտ (նվազագույն) մասնագիտական աստիճան ձեռք բերած և փորձառություն ունեցող անձեր։

Իշխանության շնորհման բնական/բնակվելու և հանրային դերակատարմամբ եղանակները լիովին ներդաշնակ են։ Այդ երկու սկզբունքներն անկյունաքարային են որպես ընդհանուր զարգացման կարևորագույն հակակշիռներ։ Առաջին դեպքում իշխանությունը տրվում

է բնական հիմքով՝ կոնկրետ տարածքում բնակվելու իրավունքով՝ սոցիալ-բնական, երկրորդի դեպքում հանրային դերակատարմամբ՝ ոլորտային-մասնագիտական՝ կենսասոցիալական։ Վերջինի պարագայում, կայացած մասնագետը նվաճում է ընտրության իրավունքն արդեն նշված «պարտականություն-վաստակ-իրավունք-պատասխանատվություն» անխախտ շղթայի հիմքով։

Եթե առաջին վեկտորը հորիզոնական է և իր սուբյեկտներին մղում է հորիզոնական ծավալման և մրցակցության, ապա երկրորդը՝ մեծապես ուղղահայաց է առաջնորդվելով վերընթաց զարգացման ուղիով։ Նման երկվեկտորությունը մշտապես հավասարակշռել է մեր պատմական ընթացքը՝ ապահովելով գերազանց արդյունքներ թե՛ ճգնաժամային, և թե՛ հետճգնաժամային իրավիճակներում։

Աշխարահաժողովի կառավարման համակարգը ձևավորվելու է հոգևոր առաջնորդության և հոգևոր իշխանության առանցքի շուրջ։ Հատուկ ընդգծենք, որ այն չի ենթադրում կրոնական իշխանություն, այլ ունի բացառապես հոգևոր բովանդակություն, որն անհրաժեշտ պայման է ներկա ճգնաժամի հաղթահարման և ցանկալի ապագան կառուցելու համար։

Այսպես օրինակ, մեր կողմից բազմիցս շեշտվել է, որ ներկա ապարժեք քաոսը հետևանք է մարդկանց գերնյութկանացվածության, երբ ամբողջովին մերժվում է հոգևորի կարևորությունը։ Այսինքն՝ միայն մարդու բնազդային պահանջմունքների հիմքով են ձևավորում իրավունքի ինստիտուտները։ Դրա պատճառներից առնացքայինը՝ առկա փլուզվող համակարգի ձևավորման հիմքերն էին։ Դրանք կայացել են Աստվածամերժության, հոգևորի մերժման սկզբունքով, որի ներկա հանգրվանը՝ հստատված քաոսն է։ Հետևաբար, հոգևոր իշխանության առաջնորդությունը դառնում է այլընտրանք չունեցող տարբերակ՝ արդի ճգնաժամի հաղթահարման գործում։

Բացի դրանից, ակնհայտ է նաև այն իրողությունը, որ Ապագա Հասարակարգում՝ Հոգևոր էակի կայացումը՝ հանրային հարաբերությունների կարգավորման ու կառավարման տեսանկյունից պետք է հիմնվի հոգևոր առաջնորդության վրա։

Այսպիսով, ապագա Ազգային պետության կառավարման համակարգն ամբողջանալու է Հոգևոր խորհդի շուրջ, որի առաքելությունը՝ բնականոն կենսընթացից շեղվելու արհեստական փորձերի բացառումն է: Այս խնդրին կանդրադառնանք հաջորդիվ, երբ կդիտարկվեն մեր առաջնային նպատակին հասնելու քայլերը:

Վերջում հավելենք, որ Աշխարհաժողովային կառավարմամբ Ազգային պետականակարգությունը նույնպես ունի իր վերճային մակարդակները: Եթե այսօր ընդունելի եզրույթաբանությամբ ձևակերպենք, ապա այն Արարչակրթական փուլում պայմանավորելու է քաղաքական արդիականացման ողջ ընթացքը: Սակայն այն չի ենթադրում գծային պարզունակ զարգացում, որը բնորոշ է արևմտյան ժողովրդավարության տիույթում առկա քաղաքական մտքին, այն բացառապես ազգային արժեկարգային գերիշխանության ներկայացուցչական կառավարման մոդել է՝ իրական ազգային-ժողովրդավարության դրսևորմամբ: Վերաճային ամբողջ ենթակարգությունը համապատասխանելու է նախորդ բաժնում քննարկված՝ Հոգևոր էակի ներքին հասունացման փուլերին՝ դրանց քաղաքական կառավարման դրսևորումներին: Ըստ այդմ, առանձնացվում է պետականակարգության հետևյալ մակարդակները.

1/ Ազգային Պետություն

2/ Արդարապետություն

3/ Ազնվապետություն

4/ Շնորհապետություն

5/ Նվիրապետություն

6/ Արարչապետություն

7/ Հայրապետություն

Յուրաքանչյուր մակարդակի մանրամասն բնութագրումից կխուսափենք, քանի որ այն հնարավոր չէ ներկայացնել ժամանակակից լեզվամտածողությամբ՝ սոցիալական ինֆորմացիայի դեռևս հասանելի բառապաշարով: Այս համատեքստում միայն նորից

շեշտադրենք, որ պետականակարգության յուրաքանչյուր մակարդակ կարող է կայանալ մարդ-էակի էության հասունացման արդյունքում, որի բարձրագույն վիճակն **Էացումն է՝ Հայրապետության հաստատումով՝ Պատմության Ավարտով. . .**

Գ/ Տնտեսական ոլորտ: Հիմնադրամային տնտեսվարում: Տնտեսական արդիականացման վերաճային փուլերը

Հայկական քաղաքակրթության ապագա կենսընթացի համար ելակետ համարվող Ազգային պետության ամբողջականացման վերջին շերտը վերաբերում է տնտեսվարման հիմքերին: Դրա միջոցով, ըստ էության, հստակեցվում է Ապագա Հասարակարգի (ֆորմացիայի) ողջ բնույթը: Այստեղ պետք է հատուկ շեշտել, որ ժամանակակից գիտական և հասարակական մտքում դեռևս ազդեցիկ է պատմության պարբերականացման դասակարգային մոտեցումը, որի համաձայն ընդհանրապես տնտեսական բազիսն է համարվում ֆորմացիաների առաջացման, տարանջատման հիմքը: Այս պարագայում, մարդկության զարգացման ողջ շարժիչ ուժը համարվում է տնտեսությունը: Դրանից ելնելով, մարդկության պատմությունը ներկայացվում է դասակարգերի հերթափոխի գծային ընթացքով:

Մեր կողմից առաջարկվող մարդկության (քաղաքակրթությունների) ցիկլային շարժընթացի սխեմայի համաձայն Համաշխարհային քաղաքակրթության (Համաշխարհային պատմական տիպերի) ցիկլային շարժընթացում, տնտեսական բաղադրիչը՝ մյուս բաղադրիչների հետ, ունի ընդամենը համահավասար համակարգաստեղծ նշանակություն:[3]

Ներկա հետազոտական խնդրի համատեքստում նույնպես, մենք տնտեսությունը դիտարկում ենք համակարգաստեղծ սուբստանտներից մեկը, ընդ որում՝ այն ամբողջությամբ համարելով փոխկախված առաջին երկու բաղադրիչների՝ էներգայի և տեղեկատվության էությունից ու բնույթից: Ըստ այդմ, Ապագա Հասարակարգի բովանդակության և ձևի ճարտարապետման համար, տնտեսական՝ նյութական հիմքին մենք չենք տալիս առաջնահերթություն, այլ դիտարկում ենք մյուս

[3] Քաղաքակրթությունների ցիկլային շարժընթացի վերը քննարկված սխեման գիտականորեն հիմնավորված և մանրամասնորեն ներկայացված է «Քաղաքակրթությունների աշխարհագրական տեսություն: Հայկական քաղաքակրթության աշխարհագրական հիմքերը» աշխատությունում: Գյումրի, 2022, էջ 313 էջ

սուբստանտների հետ փոխպայմանավորվածության մեջ՝ որպես երրորդ՝ նյութական սուբստանտ։

Ապագա Տնտեսակարգի հիմնավորման համար պետք է հիմք ընդունել մի շարք ելակետային պահանջներ։ Դրանք են.

Պետք է արձանագրել ժամանակակից լիբերալ տնտեսության «մահը»։ Մենք արդեն փաստարկել ենք այն իրողությունը, որ ներկա տնտեսակարգը հանդիսանում է առկա ճգնաժամի և՛ պատճառներից, և՛ արտահայտման ձևերից մեկը, որը հիմնավորել ենք համաշխարհային տնտեսության մեջ և՛ բուն ճգնաժամի երևութական դրսևորումների, և՛ սպասվելիք (առաջարկվող) փոփոխությունների մանրամասն վերլուծությամբ։

- Ապագա Տնտեսակարգի նշանակությունն ու առաքելությունը բացառապես պետք է համապատասխանի Հոգևոր Էակի կայացման պահանջներին՝ որպես մարդկային էության վերաճն ապահովող տնտեսական-նյութական հիմք։ Ըստ այդմ, այն պետք է լիարժեք ներդաշնակվի Նոր Համակարգի կայացման քաղաքական ու մշակութայնացման կոդերի հետ։ Ի տարբերություն ներկա տնտեսական իրողությունների, որոնց շարժիչ ուժը բացառապես շահն է, ապագան պետք է կառուցվի «Մասերը լիարժեք և կենսունակ են Ամբողջի կենսագոյությամբ, իսկ Ամբողջը կենսագործուն է Մասերի լիարժեքությամբ ու ամբողջականացմամբ» տնտեսական բանաձևմամբ, որը միևնույն ժամանակ նաև տիեզերաբնական օրենք է։
- Ապագա Տնտեսակարգի էությունն ու բնույթը պետք է կայանա անցյալ-ներկա-ապագա եռամիասնության հիմքով։ Ըստ այդմ, նրա հիմքերը պետք է փնտրել անցյալում, արդիականացնել՝ ներկայում, կենսագործել՝ ապագայում։

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ մենք Ապագայի համար առաջարկում ենք **«Հայրենատիրական Տնտեսակարգը», որի կայացման մեխանիզմը «Հիմնադրամային տնտեսավարման»** մոդելն է, այսինքն՝ առաջարկվում է **Հայրենատիրական սեփականությամբ Հիմնադրամային տնտեսվարություն**։

Մինչ մոդելի ներկայացումը պետք է արձանագրենք, որ այն լիովին բավարարում է վերոնշյալ պահանջները: Մասնավորապես, տնտեսական կացութաձևի այս համակարգը կիրառվել է դեռ մեր նախնիների կողմից՝ համայնքներում տնտեսական հարաբերությունների կառավարման, բուն արտադրության կազմակերպման՝ արտադրողական ուժերի ու արտադրական հարաբերությունների կենսագործման ժամանակ: Հենց այս մոդելն էր, որ հնարավորություն տվեց հայ տեսակին՝ սեփական համակեցությունում, բացառել ստրկատիրությունը, խորը ճորտատիրությունը և աշխատուժի գերշահագործումն ու դասակարգային անհաշտ պայքարը, ինչից ծագեցին և ինչի վրա կառուցվեցին ներկայիս արևմտյան հանրապետականակարգությունները, ժողովրդավարական քաղաքական ռեժիմները, վաշխառուական կապիտալով տնտեսակարգն ու սպառողական հասարակարգը:

Առաջարկվող տնտեսական այս համակարգի պարագայում ոչ միայն հնարավոր է կիրառել աշխարհաժողովային կառավարումը (քաղաքական կառավարման կոդը), այլ ավելին՝ այն ինքնին բխում է դրանից՝ լիարժեք ներդաշնակվելով վերջինիս հետ:

Անցյալում այս մոդելի տնտեսական հարաբերությունները կառուցված էին համայնքի ներսում արտադրական արդյունքի **արդարացի** բաշխման վրա, որը լիովին համապատասխանում է նաև Ապագա Համակարգի կայացման մշակութային կոդին՝ **Արդարության** գերակա սկզբունքին:

Այս ամբողջն անհրաժեշտ ու բավարար պայման են մարդկային էության համապատասխան վերաճն ապահովելու համար, քանի որ տնտեսվարման սկզբունքը, տնտեսական առաջընթացի շարժիչ ուժն ապագայում ոչ թե շահն է, այլ մարդկանց անհրաժեշտ կենսարժեքը՝ Բարիքն է՝ Ընդհանուրի, Ամբողջի Բարիքը: Այսինքն՝ Հոգևոր Էակի պարագայում, մարդակային պահանջների վերարժևորումը հնարավոր է ապահովել այս տնտեսական կացութաձևի շրջանակներում: Իհարկե, այն որպես անցյալի ժառանգություն, այսօր պետք է ամբողջապես արդիականացվի՝ ժամանակակից նորագույն տեխնոլոգիաների միջոցով: Այս դեպքում արդեն հնարավոր կլինի նորագույն տեխնոլոգիաների և նրանց հետագա զարգացման

անընդհատականությունը վերադարձնել իրական նշանակության։ Եվ տնտեսական զարգացումն ու նորագույն նվաճումները չեն հանդիսանա մարդկանց գործունեության նպատակ, այլ՝ կդիտարկվեն սոսկ ժամանակի գործիքներ, որոնք կոչված կլինեն առաջին հերթին բավարարելու Հոգևոր Էակի հոգևոր-ոգեղեն, ինչպես նաև բանական ու սրանցով վերարժևորված ու սրանց ծառայող նյութական պահանջմունքները։ Եվ ի վերջո, միայն տնտեսական ցուցանիշների քանակական աճը չի հանդիսանա զարգացման ցուցիչ, որն իր հերթին թույլ կտա բացառել մարդուն մարդկայնությունից զրկող անհագ սպառողականության մոլուցքը։ Իսկ վերջինս հանդիսանում է ժամանակակից մարդու և հասարակությունների վարքագծի նպատակային ձևը, քանի որ դրա միջոցով է ապահովվում արտադրողականության աճը։

Այս ամենով հանդերձ, լիարժեք բավարարվում է նաև ժամանակակից տնտեսակարգի արմատական փոփոխման պահանջը՝ որպես ճգնաժամի հաղթահարման գլխավոր պայմաններից մեկը։

Այսպիով, մեր կողմից առաջարկվող Հայրենատարիրական սեփականությամբ Հիմնադրամային տնտեսավարման մոդելը, որը չի բացառում ու մերժում սեփականության նաև մյուս ձևերի առկայությունն ու գերծունեությունը, որպես **«Հայրենատիրական Տնտեսակարգ» հանդիսանում է ներկա ճգնաժամի հաղթահարման և ցանկալի Ապագան կառուցելու երրորդ՝ անհրաժեշտ պայմանը։**

Սակայն պետք է ընդգծենք նաև, որ «Հայրենատիրական Տնտեսակարգի» Հիմնադրամային տնտեսավարման մոդելի մանարմասն դետալավորման ամբողջական փաթեթ դեռևս չկա ու չէր կարող լինել, քանի որ այն մանարմասն կդետալավորվի միայն բուն տնտեսական գործընթացի արդյունքում և անընդհատ կերպափոխման շնորհիվ։ Այս տեսանկյունից, մենք Ապագա Տնտեսակարգի կայացման համար ելակետ ենք սահմանում՝ ձևավորվող Ազգային պետության կողմից իրականացվելիք տնտեսական քաղաքականությունը։ Այսինքն՝ Ազգային Պետությունն իր նպատակաուղղված քաղաքականությամբ կարող է ներդնել վերնոշյալ Տնտեսակարգի ձևավորման ու զարգացման սկզբունքները, չափանիշները

և պայմանները։ Իսկ դրա համար կա բավականին հիմնավորված հայեցակարգեր, հետազոտություններ, որոնց ամբողջությունը թույլ կտա պրոցեսն ընթացքի մեջ դնել։

Եվ այսպես, «Հայրենատիրական Տնտեսակարգի» Հիմնադրամային տնտեսավարման մոդելի ընդհանուր ճարտարապետման համար անհրաժեշտ է բացահայտել տնտեսական այն սկզբունքները, որոնք՝ որպես անկյունաքարեր թույլ կտան առանց շեղումների դետալավորել տնտեսական հարաբերությունների բուն բովանդակությունը՝ կայացնելով ցանկալի Ապագան։

Այս համատեքստում, առաջին խնդիրը թերևս վերաբերում է սեփականության ձևին։ Ընդհանարպես, սեփականության ձևն է հանդիսանում տնտեսակարգերի տարանջատման հիմքը, ինչպես մասնավոր սեփականությունը՝ կապիտալիստականի պարագայում կամ հանրայինը՝ սոցալիստականի պարագայում։

«Հայրենատիրական Տնտեսակարգի» համար, ինչպես նշել ենք, առաջարկվում է **Հայրենատիրական սեփականության** ձևը՝ չբացառելով նաև սեփականության այլ ձևերի գոյությունը։

Հայրենատիրական սեփականությունը նոր համակարգաստեղծ ու հիմնարար սկզբունք է, որի վրա ձևավորվում է հիմնադրամային փոխհամագործակցող տնտեսվարումը։ Այն պարտադրում է յուրաքանչյուր բնակչի (քաղաքացու) սեփականության փաստացի ամրագրում՝ առաջին հերթին բնական ռեսուրսների նկատմամբ։

Այս հիմքով ձևավորվում է հաջորդ սկզբունքը՝ բնական պաշարների ազգային սեփականության պահանջը։ Նոր Տնտեսակարգում այս սկզբունքը ոչ թե ունենում է դեկլարատիվ բնույթ, այլ ռեալ գործողության մեխանիզմ։ Ինչն իր հերթին ձևավորում է Նոր տնտեսվարման մյուս սկզբունքը։ Այն է հիմնադրամային տնտեսվարումը, որի պարագայում ազգային բնական հարստության նկատմամբ յուրաքանչյուր քաղաքացու սեփականության ռեալ իրացումն ապահովվում է հիմնադրամային տնտեսվարմամբ։ Մասնավորապես, յուրաքանչյուր քաղաքացի հանդիսանում է

«Հիմնադրամի» սեփականության բաժնետեր և ունենում է անձնավորված շահութաբաժին: Բնական պաշարները շահագործող ընկերությունները (մասնավոր, պետական, մասնավոր-պետական) հիմնադրամին՝ ռեսուրսի տիրոջը, վճարում են նրա բաժնեմասը՝ որպես Բնավճար: Իսկ այդ հիմնադրամներն իրենցից ներկայացնում են մշտական բնակիչների անձնավորված ու հավասար բաժնեմասերով համակարգեր, որտեղ յուրաքանչյուր բնակիչ բաժնետեր է և ստանում է անձնավորված շահութաբաժին, վերահսկում և մասնակցում է հիմնադրամի կառավարմանը: Սակայն նա իր բաժնեմասը չի կարող վաճառել, ժառանգությամբ կամ նվիրատվությամբ օտարել:

Վերջին կարևոր սկզբունքը վերաբերում է հիմնադրամում կուտակվող միջոցների օգտագործմանը: Այդ միջոցները, յուրաքանչյուր բնակչի ֆիքսված շահութաբաժնի վճարումից հետո, այլ նպատակով չեն կարող օգտագործվել, բացի նոր ներդրումներ կատարելուց: Վերջինիս պարագայում ձևավորվում են հիմնադրամին պատկանող Նոր ձեռնարկություններ՝ վերոնշյալ սկզբունքների պարտադիր կիրառմամբ: Դրա համար, տնտեսական այս մոդելը հաճախ անվանվում է **«Քաղաքացիական շրջանառու ներդրումային հիմնադրամ»,** որի պրատիկ գործունեությունն այսօր ծավալվում է՝ Նորվեգիայում, Այլասկայում, Իրանում, և փոքր չափերով նաև՝ Հայաստանում:

Մեր խորին համոզմամբ, ապագայում վերաիմաստավորվելու է նաև տնտեսական արդյունքի գնահատման միավորը: Խոսքը վերաբերում է փողի վերաարժևորմանը կամ որ ավելի ճիշտ է՝ փոխարինմանը: Փաստենք, որ նույնիսկ հակահամակարգի սցենարներում էլեկտրոնային կամ թվային փողի գաղափարն է, կան արդեն իրականացման փորձեր՝ իրենց աղետալի հետևանքներով: Սակայն մեր կարծիքով տնտեսական արդյունքի չափման միավոր կարող է դառնալ միայն Ժամանակը՝ որպես ապրանքի ու ծառայության վրա ծախսվող հիմնական արժեք: Ժամանակի՝ որպես տնտեսական հիմնական արժեքի կիրառման, տեսական հիմնավորումներ արդեն կան՝ հայկականության գիտա-հասարակական մտքում: Դրանց պրակտիկ

կիրառումը՝ նույն ժամանակի խնդիր է, քանի որ նորագույն տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն է տալու ստանալ բոլորովին նոր ռեալություններ, որտեղ տնտեսական արդյունքի ստեղծման համար հիմնական արժեքը կդառնա՝ ծախսվող ժամանակը՝ որպես չափման հաստատուն մեծություն ու միավոր։

Վերջում հավելենք, որ «Հայրենատիրական Տնտեսակարգի» Հիմնադրամային տնտեսավարման մոդելի գործարկումը՝ Հայկական քաղաքակրթկան կենսընթացում, նույնպես ունի իր վերաճային փուլերը և դրանց համապատասխան՝ տարածքային դրսևորումները։ Դրանք համապատասխանելու են մեր նպատակադրումների ենթակարգությանը։ Այս պարագայում հստակ կարելի է առանձնաձնել 3 չափում.

- Նվազագույն մասշտաբում պետք է կայացվի **«Համապետական Մայր Հիմնադրամը»,** որպես մեր **Բարձր նպատակի** իրացում՝ Ազգային պետության տրամաբանության մեջ։ Այն ձևավորվելու է տեղական համայնքային հիմնադրամների լիարժեք ներդաշնակման շնորհիվ։ Ակնհայտ է, որ այն հետագայում ընդարձակվելու է մեր քաղաքակրթական արեալում՝ Ազգային պետության սահանների ընդարձակմանը զուգահեռ։ Հետևաբար, այս մասշտաբը ներառում է նաև մեր **Բարձրագույն նպատակը։**
- Միջին մասշտաբը՝ համապատսախանելով մեր **Մեծ նպատակին**, ներառում է **«Համահայկական Մայր Հիմնադրամի»** կայացումը՝ Հայկական «Ազգ-պետություն» համամոլորակային սուբյեկտի մակարդակում։
- Եվ երրորդ մասշտաբն արդեն ընդգկում է ողջ մոլորակը, որտեղ ներկա «մարդակեր» ու «ազգակեր» մակաբուծային՝ պարազիտական համաշխարհային ֆինանսաբանկային ինստիտուտներին կփոխարինի **«Համաշխարհային Մայր Հիմնադրամը»՝** որպես համընդհանուր Արդարության հաստատման կարևորագույն գործիք։ Իսկ դա արդեն համապատասխանում է Հայկական քաղաքակրթության **Գերնպատակին,** որի արդյունքը՝ Արդար Աշխարհակարագի ստեղծումն է։

Ամփոփումը ներկայացնենք հետևյալ եզրակացությամբ.

Հայոց Ազգային Պետությունը, որը հանդիսանալու է Հայկական քաղաքակրթության ապագա կենսընթացի մեկնակետը, իրենից ներկայացնելու է հայրենատիրական սեփականության հիմքի վրա և հիմնադրամային համագործակցային (կոոպերացիոն) տնտեսվարմամբ, աշխարհաժողովային կառավարման համակարգի միջոցով Հոգևոր Էակի կայացման եռամիասնական կենսագործուն եռամբողջություն:

Այն կարող է և պետք է լինի Ապագա Հասարակարգի նախատիպը, օրինակը, ըստ այդմ, այսօր ճգնաժամում գտնվող հասարակությունների ցանակալի կենսաձևը: